Ապա այս պատկերը «ի Հռոմ վերածի»։

4.(¹) *Իսկ Մագիստրոսի Գրիգոր Հայկազնի յետ ժամանակի*

5. *Շինէ տեղ ուխտի յիւրում կայանի ի Տարուն երկրի։*

6. *Ի սմանէ որդի Վահրամ պատանի ի Հռոմ յուղարկի.*

7. *Խնդրել փափաքի զտիպս այս հրաշալի տալ իւր նահանգի.*

8. *Իսկ սորին որդի յոյժ վերապատուի ի գահին Հռոմի.*

9. *Եւ տըւեալ զխնդրելի, զգանձն անթաքչելի առանց պատճառի։*

10. *Առեալ գայ անտի զտիպս այս տենչալի սըրտիւ բերկրալի։*

11. *Իսկ Մագիստրոսի մեծօ* (s!) *հանդիսի ընդ յառաջ չարժի.*

12. *Ի ծունկս անկանի գրոշմի քի յորդ արտասուելի.*

13. *Բարձեալ ի յուսի, բերեալ դնէ յուխտի, յարկ իւր կայանի.*

14. *Իսկ յետ այս բանի, յետ ժամանակի աւուրք անցանի։*

15. *Վասիլ արքայի՝ Գէորգ իշխանի, ոստ Բագրատունի.*

16. *Փոխելով անտի բերեն հըրճուալի տունս Այրարդին.*

17. *Ցիւր հրմնարկելի ուխտն հրաշալի որ Հայու Թառի։*

Ահա, եայլն(²)։

Մենք դիտմամբ այս ամբողջ հատուածը մէջ բերինք, որովհետև, թւում է, թէ այստեղ բնագրի տողերի մէջ փոփոխութիւն է կատարուել (այսպէս է նաև Երեւանի Թանգարանի N 354 *ձեռագիրը). ութերորդ և իններորդ տողերը չեն կապւում իրար հետ. բոլորովին անկապ է նաև տասն եւ հինգերորդ տողը ներկայ տեղում եւ խանգարում է* 14 *և* 16 *տողերի տրամաբանական միութիւնը. մինչդեռ եթէ իններորդ տողից յետոյ դնենք տասն և հինգերորդը և սորան կցենք տասներորդը, ամբողջ հատուածի միտքը և տրամաբանական կապը կ'վերականգնուի։ Եւ յիրաւի նոյն գանձի մի ուրիշ տան մէջ այս սրբութեան համար պարզ ասուած է, «մեզ տըւեալն ընծայ յարքաէն Վասլայ եւ Գորգ իշխանայ»։*

Ըստ այսմ խաչելութիւնից յետոյ՝ պատկերն ընկել է Հռոմ (հեղինակը հասկանում է բուն Հռոմը, «ուր կա շիրիմ հօատոյ վիմին», Գրիգոր Մագիստրոս իւր Վահրամ պատանի որդուն ուղարկել է խնդրելու այդ պատկերը. Վահրամ պատիւներ է ստանում Հռոմայ գահոյքից. Վասիլ արքան և Գորգ իշխանը նուիրում են այս անթաքչելի գանձը. Մագիստրոս ընդ առաջ է գնում սրբութեան՝ եւ ուսի վերայ բարձած՝ բերում գնում է իւր կայանի՝ «ի Տարուն երկրի» ուխտի մէջ։ Ժամանակ անցնելուց յետոյ՝ փոխադրում է իւր հիմնարկելի (թէ՞ հիմնարկած) Հայու Թառի ուխտը։

Թովմա Մեծոփեցին ևս տալիս է տեղեկութիւն Ամենափրկչի ծագման եւ Հայաստան բերելու մասին. նա պատմելով իւր ուսուցչի՝ Յովհաննէս Մեծոփեցու մահը Հաւուց Թառում, յայտնում է, թէ գնացել էր այնտեղ երկրպագելու «առաջի պատկերին Ամենափրկչին, որ և դրոշմեալ եղև աղօթիւք սուրբ աւետարանչին Յովհաննու ի վերայ սրբոյն Գողգոթայի ի խնդրոյ տիրամօր Աստուածածնին։ Եւ յետոյ պարգեւօք տուաւ Աշոտոյ թագաւորին ի Հռոմոց թագաւորէն, եւ բերեալ եղեւ ձեռամբ կիւրապաղատ իշխանին»(¹)։

Ի վերջոյ Հաւուց Թառի վանքի և նորա սրբութեան մասին յիշատակութիւն ունի և Սիմէոն կաթողիկոս(²)*. Մագիստրոսի շինած վանքի առաջին վանահայր համարելով նորա որդուն՝ Վահրամ–Գրիգորիսին՝ ՆՀԲ=1023 թուին. բայց ուխտն աւելի հին է, Աշոտ պատրկի հիմնած, նոյնացնելով տեղի անուններն ու սրբութիւնները։ Հակասութիւնների մի բաւիղ, որ թւում է, թէ դժուար է մէջից դուրս գալ։*

(1) *Հատուածը մէջ է բերուած տան չորրորդ տողից։*

(2) *Ամբողջութիւնը տ. ցաւելուած 1։*

(1) *Փարիզ. 1860. 61.։ Թովման ակնարկ ունի այդ պատկերի մասին նաեւ իւր մեծ յիշատակարանի մէջ. հրատ. Կոստանեանի. 1892. Թիֆլիզ. եր. 68։*

(2) *Ջամբռ. 1873. 275։*